Ասլան աղային նշանակեց հարկերի վերակացու: Այս Ասլան աղային ուղարկեց երկիրը, որ գլխագրի բոլոր մարդկանց և իրերը: Նախ եկավ Քանաքեռ ձմեռ ժամանակ և իր առջև կանչեց գյուղացիներին, որ ցույց տան իրենց շնչերին: Նախ եկավ մելիք Դավիթը և բերեց իր ութ որդիներին, դստեր որդուն և ցույց տվեց: Բոլորը գալիս էին իրենց որդիներով և գրանցվում: Իսկ իմ հայր Սկրտիչը ինձ՝ Զաքարիային, շալակեց, իմ եղբայր Խաչատուրին առջև գցած գնաց: Երբ մեզ տեսավ փոքր ու կաղ և ծուռ ոտքով, բարկացավ ու ասաց՝ քո առողջ որդիներին պահել ես, անդամալույծներին ես բերել: Եվ հրամայեց երեսի վրա պառկեցնել գետնին և բերելով ջուր թափեցին մարմնի վրա, ոտքից մինչև գլուխ ջրողող արին: Մի մարդու նստեցրեց գլխի վրա, իսկ մի ուրիշի էլ՝ ոտքերի վրա, և չորս զինվորի հրամայեց երկու կողմից ծեծել: Այնքան ծեծեցին, մինչև որ մորթին մարմնից պոկվեց, իսկ ինքը անշնչացավ: Նրան համարեցին մեռած: Ապա քաշելով թաղեցին փայեղի մեջ:

Բարսեղ անունով մի մարդու և Ղազար անունով մի այլի հանեցին քսան եղունգները, մի այլի Երևանցի Մարուքե անունով կախեցին մի ձեռքից և այնքան ծեծեցին, մինչև որ բոլոր հոդերը խախտվեցին: Եվ այսպես նրա սարսափը բոլորին տիրեց մեծ աստով, ուստի ծծկեր երեխա էլ չմնաց, որ ցույց չտվին: Իսկ եթե ծերեր էին գալիս, հրամայում էր իր առջև երթևեկել և նայում էր, եթե գլուխը կորացած էր ու երկու ձեռքերը իր հետևն էր տանում, չէր գրում, իսկ եթե գլուխն ուղիղ էր պահում և ձեռքերը տանում էր առաջ, սրան գրանցում էր:

Ոչ ոք այս չիմացավ: Իսկ երբ մանուկներ էին գալիս, պարանը բերում և պատանու պարանոցի շուրջը պատում էր, պարանի երկու ծայրերը դնում էր մանկան բերանը և ասում էր, որ ատամներով բռնի, և օղ անելով տանում էր գլխի վրա, եթե գլխով անցնում էր, թողնում էր նրանց, որ գնան, իսկ եթե գլխով չէր անցնում, նրան գրանցում էր: Եվ այսպես բոլորին գրանցեց խիստ ճշգրտությամբ՝ մարդ, կով, ձի, ջորի, էշ, ոչխար, ջրաղաց, ձիթաղաց, արհեստներ, բրնձաղաց, այգիներ, բանջարանոցներ և այլ, ինչ որ գտնվեց, գրանցեց և բոլորը հարկի տակ դրեց: Եվ բոլոր գրվածները դրեց արքունի դիվանը:

ԳԼՈՒԽ ԼԹ
ՀԱՐԿԱՀԱՎԱՔ ՇԱՀՂՈՒԼԻ ԲԵԿԻ ՄԱՍԻՆ

Պարսից Շահ Աբաս թագավորը շատ էր սիրում զվարճություն և գինարբուքյուն: Օրերից մի օր իշխաններից ոմանց առնելով գնաց պարտեզը ընթրելու և գինի խմելու: Նստած խնճորենու տակ, խոտի վրա և նայելով ծառին՝ ասաց. «Ինչքա՞ն պտուղ կունենա այս ծառը»: Ոմանք այսքան լիտր ասացին, ոմանք՝ այնքան: Առջևում կանգնած Շահղուլի բեկ անունով մի մարդ, որ խոհանոցի սպասավոր էր, ասաց. «Թագավոր, ողջ եղիր, որ այսքան լիտր խնձոր կա այս ծառի վրա. հրամայիր թող քաղեն և կշռեն, եթե մի սխալ ավել կամ պակաս լինի, իմ աչքերը հանիր»: Երբ շահը լսեց այս, սոսկաց: Հրամայեց երկու մարդու՝ բարձրանալ ծառը և բոլորը քաղել, չթողնել մի հատ անգամ և չկորցնել: Այդ երկու մարդը ելան, քաղեցին բոլորը, իջեցրին, կշռեցին, կշիռը այնքան էր, որքան և ասաց Շահղուլի բեկը, ոչ մի գրամ ավել կամ պակաս չէր: Շահը հարցնում է. «Քո իմաստությունը միայն առ է՞դ է, թե՞ վերաբերում է ամեն բանի»: Մարդը պատասխանում է. «Ոչ թե առ այդ միայն, այլ առ ամեն ինչ, քանզի քո ծառան արքունի խոհանոցում է, ինչ որ գալիս գնում է, ոչ չափվում է, ոչ էլ կշռվում, ինչ որ ես ասում եմ, այնքան էլ լինում է»: Արքան հրամայում է բերել խարարով ցորեն և հարցնում է՝ քանի՞ լիտր է սա: Մարդը պատասխանում է՝ այսքան լիտր է: Եվ չափելով տեսան, այնքան էր, որքան նա ասաց: Շահը զարմացած հրամայեց նրան վտարել երկրից: Ասաց՝ դրա աչքը չար է, վեմ կճեղքե, աղբյուրները կխցի և բույսերը կչորացնի: Եվ հանեցին նրան տնով և ամեն ունեցվածքով, հալածեցին: Նա գնաց հասավ Երևան և ծանոթացավ Ամիրգունա խանին, քանզի նախապես իրար ճանաչում էին: Խանը նրան նշանակեց արտերի վերակացու, որ իմանա հինգերորդի որքանությունը: Այդ պաշտոնը պարսիկները կոչում են հազարչի: Իսկ նա գնում է երկիր նայելու. եթե գնում էր որևէ արտ, ասում էր՝ այսքան ցորեն կա այստեղ, իսկ եթե դեզի էր մոտենում, ասում էր՝ այսքան խուրձ է, իսկ եթե գնում էր սեղջի վրա, ասում էր՝ այսքան լիտր է, եթե մոտենում էր խաշների հոտ կամ խոշոր եղջերավորների նախիր, ասում էր՝ այսքան խոշոր